

Գործնական աշխատանք 1
Հեղուկի ծավալի չափում:
Չորսուի ծավալի, դասագրքի մեկ թերթի հաստության որոշում

Անհրաժեշտ պարագաներ

1. չորսու
2. քանոն
3. ջուր կամ հյուլթ
4. չափագլան
5. բաժակ

Փորձի ընթացքը: 1.ա Հեղուկի ծավալի որոշումը:

Աշխատանքի նպատակը` որոշել տրված հեղուկի ծավալը:

Փորձի ընթացքը

1. Որոշել չափագլանի մեկ բաժանմունքի արժեքը: Այդ նպատակով չափագլանի սանդղակի վրա գտնել թվերով նշված երկու ամենամոտ գծիկները, մեծ արժեքից հանել փոքրը, այնուհետև հաշվել դրանց եղած միջև գծիկների քանակը: Հարևան թվերի ստացված տարբերությունը բաժանելով գծիկների քանակի վրա` կստանանք չափագլանի մեկ բաժանմունքի արժեքը:
2. Բաժակի մեջ լցնել որոշակի քանակությամբ հեղուկ և զգուշությամբ դատարկել չափագլանի մեջ:
3. Գտնել հեղուկի մակարդակին համապատասխան գծիկը և հաշվել հեղուկի ծավալը չափագլանում:

? Հնարավո՞ր է արդյոք չափել հեղուկի ծավալը, եթե այն չի տեղավորվում չափագլանում:

Փորձի ընթացքը: 2.ա. Չորսուի ծավալի չափում:


Աշխատանքի նպատակը՝ չորսուի ծավալի որոշում:

Փորձի ընթացքը

Հնում օգտագործվել են ծավալի չափման տարբեր միավորներ՝ գդալ, շտոֆ, բուռ և այլն: Դրանց մի մասն արդեն վաղուց մոռացվել է:

Մաթեմատիկայի դասընթացից հիշենք.

Միավորների միջազգային համակարգում ծավալի չափման հիմնական միավորը խորանարդ մետրն է $[մ^3]$:



Ծավալը = երկարություն · լայնություն · բարձրություն

Եթե նշանակենք երկարությունը l_1 , լայնությունը l_2 , բարձրությունը l_3 , ապա ծավալի բանաձևը կընդունի այսպիսի տեսք՝

$$V = l_1 \cdot l_2 \cdot l_3:$$

Չափի՛ր քեզ տրված չորսուի երկարությունը, լայնությունն ու բարձրությունը և վերևում նշված բանաձևից օգտվելով՝ որոշիր չորսուի ծավալը:

Փորձի ընթացքը: 3.ա. Դասագրքի թերթի հաստության որոշումը:

Աշխատանքի նպատակը՝ որոշել դասագրքի մեկ թերթի հաստության մոտավոր արժեքը:

Մտածել

Քո ձեռքի տակ եղած պարագաներով ինչպե՞ս կարող ես որոշել դասագրքի մեկ թերթի հաստությունը: